

խութեան մը հետեւեալ կերպն. տ — ր այս-
ինքն Մոռնի ձեւապիտութեան միայն միջ-
անկեալ տուտը գեղազրութեան համար ա-
ւելի երկնցուցած հաւասար բժ, զժ դժ տու-
տեւեան, իսկ զժ գժ որդիւն համար, գոր-
ծածելու է զ զ ոչ զ ուղ չոյն ձեւով պա-
հելու է, իսկ զժ գժ գանդանելու համար
ձեւափոխելու է զժ և դ նոյն ձեւով պահե-
լու է. և այլն. ի բաց առեալ տժ միւս ձե-
ւապիտութիւնը տարիներ առաջ սկսած ենք
մեր տպագրութեանց մէջ գործածել (և նոյն
իսկ մեր Երանայնորէն Մխիթար, Ժամանա-
կին այսպիսի ձեւափոխութիւնները գործա-
ծած է) ինչպէս ներկայ յօդուածին դասա-
կան տպագրութեան մէջ կը նկատուին:

ՄԵԱԿ. — Ռուսահայ օրագրիս վերջի
պրակներուն մէջ լայն տեսանք և ստորագրու-
թեամբ բանասիրական երկայն յօդուածներ,
որք կը լրեն իշխան Իլիա ձավճափաձէի Հա-
յասեաց և Վրամոյ դադափարներն. — Օրա-
գիրս 67րդ թերթին մէջ բաղդատելով Բագմա-
վէպ և Հանդէս Ամսօրեայ ի միասին, կը գրէ:

«Այժմ մենք տեսնում ենք մի թունդ միջակ-
ցութիւն Վեմնակիի «Բագմավկայի» կողմից: Նա
սամեն շանք գործ է դնում՝ «աշխարհական»
բովանդակութեան հասանելու և այդ սամի մէջ
իր վիճմական եղբայրակցին «եօթմ սարի»
յետեւ թողնելու համար»:

Ո՞նք ենք, որք մտածութիւնը յարգ-
«Մշակ»... արդի Բագմավկայ իրեն մրցակից
կը նկատէ մի միայն օտարազգի ընտիր բա-
նասիրական և գրական հանդէսները, և կը
լանայ նոցա յառաջադէմ լուսաւոր շաղին
հետեւին և այն լոկ յօգուտ և ի զարգացում
ստեղծային գրականութեան և ոչ «եօթմ սարի»
ետեւ թողլու իւր եղբայրակիցներն:

«Բովանակելի վերջին համարը այդ ձգտման
մէջ Ողիմիոս չափազանցութեան է հասել. մա
սկսել է գրել մէջ, յօդուածների հիտ սխալին,
տպել մանկ լրագիրների յայտարարութիւնները»:

Չափազանցութիւն չէ, այլ հետեւողու-
թեամբ եւրոպական պատկանելի և առաջ-
նակարգ թերթերու, քաղաքավար նորութիւն
մը յօգուտ և ի ծաւալումն ազգային լրա-
գրութեան: Դարձեալ փոքր ինչ ուղ ղնենք.

«Անկասկած է, որ երկու վանական ամսա-
գիրները, գոմէ այժմ, իրանց այդ մոր ուղղու-
թեայ մէջ մերկայացնում են մակըմթացութեան
և տեղատուութեան օրինակներ, և տեղատուութիւ-
նը, անշուշտ, «համընդ Ամսօրեայի» կողմն է»:

Մեզ համար անմխիթարական է երկու
բանասիրական թերթերու միջեւ սոյն երկուս-
րանական կամ աստեղադաշխական երեւոյթի
գոյութիւնը: Լուսամիտ մթնոլորտի ներքեւ

գրական ասպարէզը սաւառն կամ խոշոր-
ոտն շունի, թող երկուքն ալ շարունակեն
իրենց ընթացքն:

Ուշադրութեան արժանի են Մշակի 73-74
թուերու մէջ գետեղուած «Մամուլ» վերնա-
գրով քննադատական յօդուածներն, որոց
վրայ յոռորդ Բագմավկայի մէջ առիթ կ'ու-
նենանք փոքրիկ ակնարկ մը թողլու:

Հ. Ս. Ե.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՄԻՍ

15 ՄԱՅԻՍ



ԱՆԳՂԻԱ

ԱՆԳՂԻԱ-ՌՈՒՍԱԿԱՆ զանակցութիւնն Ձե-
նաստանի նկատմամբ՝ այժմ քաղաքական կա-
րեւոր գէպը մ'է: Եթէ Անգղիա և եթէ Ռուսաս-
տան կ'իմանան որ Ձինաստան ի հարկէ անկախ
կայսրութիւն մ'ըլլալու է — այդ երկու տէ-
րութիւնք միաբաներ են չինական աշխարհին
սահմանները պաշտպանելու օտար աէրու-
թեանց յարձակումներէն: Այս զանակցութեան
զիշաւոր կէտերն են, Աֆղանիստանի սահմա-
նը որոշակի գծել. Կրեմէի մէջ թոյլ տալ որ
օտար իշխանութիւն մը ձեռնամուկ ըլլայ. Ե-
զեպտոսի և Հապէնդոստանի սահմանները որոշել:
Լճրտ Սալզգուրի՝ Գեղարուեստից ձեմարա-
նին հանդիսի միջոց հաստատեց այս դաշինքը՝
կալէնթի իշխանին առջեւ, և անգղիական լրա-
գրէք մտադրու որով ընդունեցան այդ զա-
նակցութեան լուրը: Այս դաշինքը հրատարա-
կուեցաւ, որուն ղեկ կայ զիտելի կէտ մ'ալ,
այսինքն ոչ Անգղիա և ոչ Ռուսն երկաթուղի
շինելու առանձնաշնորհութիւն պիտի չունե-
նան՝ իրենց ազգեցութեան ներքայ գոտուած չի-
նական սահմանաց վրայ, թէպէտեւ Ռուսն ա-
զատ է երկաթուղի շինելու Մանչուրիայի մէջ,
իսկ Անգղիա՝ Եանկ-Մէ-Քիտանկի ծովածոցին
վրայ:

Թրանսփաւի խնդիրն յաւորեց անգլո-ռու-
սական զանադրութեան. վասն զի այն կողմե-
րուն անգլիական հպատակներն զը ներգաւ-
Պեհնէրեն, որոց ղեմ Անգղիա պատրաստեց
է զինեալ բանակ և ամուր բերդեր:

ԱՒՍՏՐԻԱ

Աւստրիական վարչութիւնն՝ Ձենընկէցու-
թեան ժողովէն առաջ կ'ուզէ 100 միլիոն ֆր.
խնդրել զինուորական ծախսու համար, այս-
ինքն ըսց յայլ գործոց՝ աւստրո-հունգարա-
կան նաւատորմիդը աճեցընելու համար համե-
մատութեամբ միւս մեծ տէրութեանց նաւային
զօրութեան: Սակայն իրեն այս խնդրիքը աւե-
լի եւս պիտի գայրացընէ Աւստրիոյ ժողովրդոց
մեծ մասը հակառակ Թունի, զոր արդէն կը
մեղադրեն՝ թէ առանց խոսարանին կարեւո-
րութիւն տալու կը կառավարէ:

Աւստրիա եւ կ'ուզէ Զինատանի կողմերը
լուս զիրք տառնուլ, ե Գոլոմմո Ձէլլ՝ հուն-
գարական խոսարանին մէջ ծանոյց թէ Կոլու-
քովքի մեծապէս կը փանայ աւստրո-հունգա-
րական շահը առաջ տանիլ, ըսց զեռ եւս
միտքը չէ զրած Ձինատանի մէջ հոգ ժառան-
գել:

Գ Ա Ղ Ղ Ի Ա

Գաղղիոյ պաշտօնարանին հանգառեան մի-
ջոց՝ Տրէյֆիւսի խնդրոյ մասին գանազան բո-
ղոքներ եղան առ վարչութիւնն: Տիւփիւի
խնդրէն ե ընդունեցաւ՝ որ այս խնդրոյն հա-
կաճառութիւնն յետաձգուի վճարակ առեմին
տալիք վճույն, ե վճարակի առեմնն ալ շատ
ըռշաջընէ իւր վճիւրը: — Զիկարոյ շարու-
նակարար կը հրատարակէ հարցաքննութիւն-
ները, յորոք զլլեւաւորապէս Մոնոյ պատմիչն
կը փանայ զիտալիա եւս այս գործոյն մէջ
մացընել, սակայն Պոնին՝ կը յայտարարէ որ
իտալիա գործ ունեցած չէ՝ ոչ Տրէյֆիւսի, ոչ
Էսթերհազիի ե ոչ այլոց հետ, այլ Գերմանիոյ
ձեռքով ստացած է վաւերագրերն:

Աւերելի մէջ կը շարունակուին հակառակ

Հրէից ցոյցերն: Զորանց դադրիացի, հաարա-
կաց գործոց պաշտօնեայն, ի Թունիդ գնաց,
ե ի Ֆէրրի արձանի մը կանգնուելու հանդի-
սին ներկայ գտնուեցաւ:

Ի Տ Ա Ղ Ի Ա

Իտալիոյ ե Գաղղիոյ յարաբերութիւններն
տերտ ե բարեկամական են: — Իտալական պաշ-
տօնարանը այս միջոցիտ այլեւայլ կերպարանք
առաւ, վերջապէս վիւսքանի վիեննա եղաւ
առաջին պաշտօնեայ, որոյ վրայ դադրական
լրագիրք գովեստիւք կը խօսին ե մեծ համա-
կրանք կը ցուցընեն, անոր գործնական կենաց
զանազան դիտողութեան արժանի դէպքերը յի-
շատակելով: — Գեռ եւս Սան Մէօնի խնդրն
կը յուզուի: — Բելլուս պաշտօնեայն ծանր պա-
տարանատուութեան ներքոյ ինկաւ:

ԱՅԼԵԻԱՅԼ ՏԵՐՈՒԹԻՒՆԳ

ՌՈՒՍԻԱ զբաղեցաւ Ձենընկէցութեան ժողո-
վոյն կատարման: — ե այս միջոցիտ՝ Անգլիոյ
հետ դաշնադրութիւնը աճէն լրագրաց մէջ մեծ
տեղ գրաւեց: — ՄԻՏՏԵԱԼ ՆԱՅԱՆԳԻ, 14, 000
զինուոր զրկեց Փիւլպպեան կղզիներուն, ուր
կը շարունակուի պատերազմը: — Ամերիկեան
վարչութիւնն թերեւս տրամադրեալ էր փոր-
ձելու՝ որ արգեօք Փիւլպպեանք կրնան իրենք
զիրենք կառավարել: ե այդ կը հաւաստէր՝
թէ յոգներ են Ամերիկացիք: Սակայն վերջա-
պէս խոնարհեցան ապստամբք, ե Միացեալ
Նահանգք կը փանան զինաթափ ընելու զիրենք:
— ԳԵՐՄԱՆԻԱ ընկերական վերանորոգման մա-
սին շատ կը խորհի, սակայն՝ երեսփոխանաց
մեծ մասը հակառակ են այս գործոյն: — ՊԵՒ-
ՃՈՅՄ մէջ ձեռնարկուելի աշխատաւորաց գործա-
դուլը մեծ քիֆօթութիւն հանեց, որ զեռ կը
շարունակուի:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

ՏԻՐՈՅԵԱՆ Հ. Ա. — Ասորական ե հայ- կական տաղաւափութիւն	249
ՂԱՅԻԿԵԱՆ Հ. Ա. — Միսիթար	254
Ե. Հ. Ս. — Համք ե իրենց ստուգարու- մութիւնը	257
ՏԵՒ ԱՄԻՉԻՍ. — Ճառեր մանկերու համար թարգ. ՔԱՍԱՆՏԻՆԻԱՆ Հ. Ա.	258
ՀԱՅՈՒՆԻ Ժ. Ա. — Պատարաւաթառ Պատ- կերմ	264
ԷՓԻԿԵԱՆ Հ. Ս. — Բնաշխարհիկ քառա- բան Ախալցխա	269
ՅՐԱՆՍՈՒԱ ԳՈՐԷ. — Սեմեքերիմ թարգ.	
ՂԱՅԻԿԵԱՆ Հ. Ա.	272

ԽԱՆԿԵԱՆՑ. — Մարաքա Մծուրմաղի	274
Գեղարուեստից Ցուցահանդէս ի Վեմիսիկ	279
ԳՐԱՆՑՍԱԿԱՆԳ.	
ԹՈՐՈՍԵԱՆ Հ. Յ. — Սերեոսի պատմու- թիւն	282
ՂԱՅԻԿԵԱՆ Հ. Ա. — Մկրտիչ Նաղաշ	186
† Ս. Ս. Գեռ. Ժ. Ազարեան	290
Ե. Հ. Ս. — Հանդէս Հանդիսից — Նոր կեանք — L'Arménie — Հայրենիք — Քիզամ դիոն — Մուրհամազ — Մուրն — Մշակ	292
Քաղաքական ամիս 15 Մայիս	295